

## Արձանագրություն

Մայիսյան համայնքի ղեկավարի 2018 թվականի 1 տարվա կատարված աշխատանքների հաշվետվությունից

Նախագահությամբ՝ Վ.Հարությունյանի

Քարտուղարությամբ՝ Ա.Կիրակոսյանի

Հաշվետու ժողովին մասնակցում էին համայնքի թվով 53 բնակիչներ և մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ՝ պարոն՝ Ա. Այվազյանը:

## Օրակարգում

Մայիսյան համայնքի ղեկավարի 2018 թվականի 1 տարում կատարված աշխատանքների մասին

Զեկ.՝ համայնքի ղեկավար՝ Ե .Մովսիսյան

Հարգելի համագյուղացիներ, հարգելի պարոն Այվազյան, Մայիսյան համայնքում 2018թ. 1 տարում կատարվել են մի շարք աշխատանքներ՝ բյուջեի եկամուտների հաշվին:

Վաղ գարնանը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցություն» ծրագրի շրջանակներում ներկրված պարարտանյութ /1 պարկը 7000 դրամ/

Համայնքում սանիտարահիգիենիկ մաքրությունը միշտ եղել է առաջնակարգ խնդիր, որի համար Լևոն Օհանյանի հետ կնքվել է համայնքում աղբաթափություն կատարելու համար պայմանագիր և կատարված աշխատանքների համար փոխանցվել է 1.500.000 դրամ:

Մայիսյան համայնքում գործող նախադպրոցական կրթական համակարգին որպես դրամաշնորհ փոխանցվել է 1.400.000 դրամ:

Համայնքի գլխավոր մուտքի մոտ լուսավորված խաչքար տեղադրելու համար փոխանցվել է 950.000 դրամ և համայնքի կենտրոնում նոր խաչքար մատուռի համար փոխանցվել է 150.000 դրամ,

Համայնքների միության ֆոնդին փոխանցվել է 19.600 դրամ

Պատերազմի, զինված ուժերի և աշխատանքային վետերանների ֆոնդին փոխանցվել է 20.000 դրամ:

Համայնքում հունվարի 28-ին և մարտի 8-ին կազմակերպված միջոցառումների համար ծախսվել է 200.000 դրամ:

Համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերի և պետական իրավունքի գրանցման վկայական ձեռք բերելու համար փոխանցել 990.000 դրամ :

Համայնքում նախատեսված 2 խորքային հորերի երկրաբանական տեղեկատվություն կազմելու համար փոխանցել, 199.000 դրամ:

Մայիսյան համայնքից 2 կմ հեռավորության վրա է գտնվում Սարգիսի անվան թաղամասը, որտեղից 48 երեխաներ ձյան և անձրևի ժամանակ ոտքով հաճախում են Մայիսյանի միջնակարգ դպրոց, սակայն համայնքապետարանը հնարավորություն է ստեղծել երեխաներին օգտվելու երթուղային տրանսպորտից, ինչպես նաև դպրոցական երեխաների բուժզննման համար տրամադրել տրանսպորտային միջոց, որի համար բյուջեից փոխանցվել է 800.000 դրամ:

Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում են գտնվում Հայրենական Մեծ պատերազմի վետերանների և Արցախյան պատերազմում անհայտ կորած Մայիսյանցիների ընտանիքները, ինչպես նաև համայնքի սոցիալապես անապահով բնակիչները որոնց տրվել է դրամական օգնություն:

2018 թվականի 1 տարվա համայնքի անապահով ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակն մեղմելու համար համայնքի բնակիչներին տրամադրվել է դրամական օգնություն 4.000.000 ընդհանուր գումարով:

Համայնքում 1 տարվա բյուջեի եկամուտները կազմում են`

ա) Հողի հարկի գանձումներ` - 94.1. 0%

բ) Գույքահարկի գանձումները` - 114.2.0%

գ/ Համայնքի սեփական եկամուտներ` -92.3%

Ավարտելով զեկույցը` Ե. Մովսիսյանը համայնքի բնակչությանը ցանկացավ բերքառատ տարի և անկորուստ բերքահավաք, որից և կախված է բնակչության բարեկեցիկ կյանքը:

Ելույթ ունեցան Մ.Գինոսյանը, Մ. Բարսեղյանը , Ս. Իսրաելյանը, Վ. Հարությունյանը, որոնք համայնքի ղեկավարի 2018 թվականի 1- տարվա

կատարված աշխատանքները գնահատեցին բավարար: Ելույթ ունենալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ՝ Ա. Այվազյանը ցանկացավ հողի հարկի և գույքահարկի գանձումները ժամանակին հավաքագրելու և հետագա աշխատանքները կատարելու և 1 տարվա կատարված աշխատանքները գնահատեց բավարար:

#### Համայնքի հիմնախնդիրները

1. 30 հա տնամերձ հողամասերի համար խորքային հորի վերանորոգում և մեկ խորքային հորի հորատում
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգում
3. Մշակույթի տան վերանորոգումը
4. Ճանապարհների ասֆալտապատում

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.Հարությունյան

Քարտուղար՝

Ա.Կիրակոսյան

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ՄԱՅԻՍՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՔԻ  
2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ

Հաստատված Մայիսյան գյուղական համայնքի ավագանու 2018 թվականի  
դեկտեմբերի 3-ի թիվ 56-Ն որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ